ՋՈՐՈՒԹՅՈՒՆ ԿԱ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ԴԱՆ. 3:1-30

*Հայ. **12:11** - 11 Եւ նորանք հաղթեցին նորան՝ Գառի արիւնով և իրենց վկայութեան խօսքով. և չ՚սիրեցին իրենց կեանքը մինչև ի մահ:*

*Ժող. **4:9-10** - 9 Երկուսը լաւ է քան թէ մէկը. Որ նորանք վարձք ունեն իրենց աշխատանքից: 10 Որովհետև եթէ վայր ընկնեն, մէկը միւսին վեր կկացնէ. Բայց վա՜յ մէկին որ ընկնի, և մի երկրորդ չկա որ նորան կանգնեցնէ:*

*Դան. **3:1-30** - 1 Նաբուգոդոնոսոր թագաւորը մի ոսկի արձան շինեց՝ նորա բարձրութիւնը վաթսուն կանգուն, լայնութիւնը վեց կանգուն. նորան կանգնեցրեց Դուրայի դաշտում Բաբիլոնի գաւառում: 2 Եւ Նաբուգոդոնոսոր թագաւորը ուղարկեց որ հաւաքեն կուսակալներին, նախարարներին և կառավարիչներին, գլխաւոր դատաւորներին, գանձապետներին, խորհրդականներին, օրէնագէտներին և գաւառների բոլոր իշխաններին, որ գան Նաբուգոդոնոսոր թագաւորի կանգնեցրած արձանի նաւակատիքին: 3 Այն ժամանակ ժողովուեցան կուսակալները, նախարարները և կառավարիչները, գլխաւոր դատաւորները, գանձապետները, խորհրդականները, օրէնագէտները և գաւառների բոլոր իշխանները Նաբուգոդոնոսոր թագաւորի կանգնեցրած արձանի նաւակատիքին, և կանգնեցին այն արձանի առաջին, որ կանգնեցրել էր Նաբուգոդոնոսորը:*

4 Եւ մունետիկը կանչում էր ուժով. Ձեզ են ասում, ով ժողովուրդներ, ազգեր և լեզուներ, 5 Երբոր լսէք փողի, սրնգի, քնարի, ջութակի, տաւիղի տիկի և ամեն տեսակ նուագարանների ձայնը, վայր ընկէք և երկրպագութիւն արէք այն ոսկի արձանին, որ կանգնեցրեց Նաբուգոդոնոսոր թագաւորը: 6 Եւ ով որ չընկնէ և երկրպագութիւն չանէ, իսկոյն պիտի գցուի կրակով բորբոքուած հնոցի մէջը: 7 Ուրեմն երբոր լսեցին բոլոր ժողովուրդները փողի, սրնգի, քնարի, ջութակի, տաւիղի և ամեն տեսակ նուագարանների ձայնը, ընկնում էին բոլոր ժողովուրդները, ազգերը և լեզուները և երկրպագութիւն էին անում այն ոսկի արձանին, որ կանգնեցրել էր Նաբուգոդոնոսոր թագաւորը:

8 Այս պատճառով այն ժամանակին մօտեցան մի քանի Քաղդէացի մարդիկ և չարախօսութիւն արին Հրէաներից. 9 Խօսեցին և ասեցին Նաբուգոդոնոսոր թագաւորին. 10 Ցաւիտեան կաց, արքայ. Դու, ով թագաւոր, հրաման արիր որ ամեն մարդ, որ լսի փողի, սրնգի, քնարի, ջութակի, տաւիղի, տիկի և ամեն տեսակ նուագարանների ձայնը, ընկնէ և երկրպագութիւն անէ ոսկի արձանին. 11 Եւ ով որ չընկնէ և երկրպագութիւն չանէ, պիտի գցուի կրակով բորբոքուած հնոցի մէջը: 12 Մի քանի Հրէայ մարդիկ կան, որոնց դու որոշել ես Բաբիլոնի գաւառը կառավարելու համար՝ Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը. այս մարդիկ քո հրամանին չեն լսում, ով թագաւոր, քո աստուածներին չեն պաշտում, և քո կանգնեցրած ոսկի արձանին երկրպագութիւն չեն անում:

13 Այն ժամանակը Նաբուգոդոնոսորը սրտմտութեամբ և բարկութեամբ հրամայեց որ բերեն Սեդրաքին, Միսաքին և Աբեդնագովին և այն ժամանակը բերին այն մարդկանցը թագաւորի առաջին: 14 Նաբուգոդոնոսորը նորանց պատասխան տուաւ և ասեց. Նպատակո՞վ է, ով Սեդրաք, Միսաք և Աբեդնագով, որ դուք չէք պաշտում իմ աստուծուն, և իմ կանգնեցրած արձանին երկրպագութիւն չէք անում: 15 Արդ եթէ պատրաստ էք որ երբ լսէք փողի, սրնգի, քնարի, ջութակի, տաւիղի, տիկի և ամեն նուագարանների ձայնը, վայր ընկէք և երկրպագութիւն արէք իմ շինած արձանին. բայց եթէ երկրպագութիւն չանէք, իսկույն պիտի գցվեք կրակով բորբոքված հնոցի մէջ. և ո՞ր Աստուածն է որ ձեզ ազատէ իմ ձեռքից:

16 Եւ Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը պատասխանեցին և ասեցին թագաւորին. Մենք պէտք չունենք այս բանի մասին քեզ պատասխան տալու, ով Նաբուգոդոնոսոր: 17 Ահա մեր Աստուածը որին մենք պաշտում ենք, կարող է մեզ ազատել կրակով բորբոքուած հնոցից. Եւ քո ձեռքից էլ, ով թագաւոր, նա մեզ կազատէ: 18 Եւ եթէ ոչ, թող քեզ հայտնի լինի, ով թագաւոր, որ քո աստուծուն մենք չենք պաշտում և քո կանգնեցրած արձանին երկրպագութիւն չենք անում:

*19 Այն ժամանակ Նաբուգոդոնոսորը լցվեց բարկությունով, և նորա երեսի կերպարանքը փոխվեց
Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագովի վրա, պատասխանեց և հրամայեց, որ վառեն հնոցն եօթնապատիկ
աւելի քան թէ սովոր էին վառել: 20 Եւ ամենա զօրաւոր տղամարդիկանց հրամայեց, որ կապեն
Սեդրաքին, Միսաքին և Աբեդնագովին և գցեն կրակով բորբոքուած հնոցի մէջը: 21 Այն ժամանակ այս
մարդիկ կապեցին իրենց անդրավարտիքներով, պատմուճաններով և վերարկուներով և միյուս
հանդերձներով և գցեցին կրակով բորբոքված հնոցի մէջ: 22 Որովհետև թագաւորի խօսքը սաստիկ էր և
հնոցը չափազանց վառված էր, այն մարդկանց, որոնք վեր առան Սեդրաքին, Միսաքին և
Աբեդնագովին, սպանեց կրակի բոցը. 23 Եւ այս երեք մարդիկ՝ Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը՝
ընկան կրակով բորբոքված հնոցի մէջը կապուած:*

*24 Այն ժամանակ Նաբուգոդոնոսոր թագաւորը ապշել էր և շտապելով վեր կացավ և խօսեց և ասեց իր
խորհրդականներին. Չէ՞ որ մենք երեք մարդ գցեցինք կրակի մէջ՝ կապված. նորանք պատասխանեցին և
ասեցին թագաւորին. Այո, ով թագաւոր: 25 Նա էլ պատասխանեց և ասեց. Ահա ես չորս մարդ եմ
տեսնում՝ արձակված ման են գալիս կրակի մէջ. Եւ վնաս չկա նորանց վրա. Եւ չորրորդի կերպարանքը
աստուածների որդիի է նման: 26 Այն ժամանակ մօտեցաւ Նաբուգոդոնոսորը կրակի հնոցի դռանը,
պատասխանեց և ասեց. Ով Սեդրաք, Միսաք և Աբեդնագով, Բարձրեալ Աստուծո ծառաներ, դուրս ելէք
եկէք: Այն ժամանակ Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը դուրս եկան կրակի միջից: 27 Եւ եկան
կուսակալները, նախարարները, և կառավարիչները և թագաւորի խորհրդականները, մտիկ տվին այն
մարդկանց, որ նորանց մարմնի վերայ կրակը չէր տիրել և նորանց գլխի մազը չէր այրվել և նորանց
անդրավարտիքները չէին փոխվել, և կրակի հոտն էլ չկար նորանց վրա:*

*28 Նաբուգոդոնոսորը պատասխան տվեց և ասեց. Օրհնեալ է Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագովի
Աստուածը, որ ուղարկեց իր հրեշտակին և ազատեց իր ծառաներին, որոնք նորան ապավինեցին և
թագաւորի խօսքը անարգեցին, և իրենց մարմինները տվին, որպէս զի չպաշտեն և չերկրպագեն ոչ մի
աստծո, բացի իրենց Աստծուց: 29 Եւ ինձանից հրաման է դուրս գալիս, որ ամեն ժողովուրդ, ազգ և
լեզու որ սխալ բան ասէ Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագովի Աստուծո դէմ, պիտի կտոր կտոր հօշատվի
և նորա տունը աղբանոց պիտի դառնա, որովհետև չկա մի ուրիշ աստված որ կարող լինի այսպէս
ազատել: 30 Այն ժամանակ թագավորը հաջողություն մաղթեց Սեդրաքին, Միսաքին և Աբեդնագովին
Բաբիլոնի գաւառումը:*

1. ԶՈՐՈՒԹՅՈՒՆ ԿԱ, ՀԱՎԱՏՔՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ:
THERE IS POWER IN FAITH-FOUNDED FRIENDSHIPS

- Դանիելի գրքում գրված է 3 եբրայեցի տղաների մասին: Այս տղաները հիշատակվում են 16 անգամ Դանիելի գրքում, բայց երբեք բաժանված չեն այլ միշտ միասին: Այս տղաներն անբաժան էին: Նրանց ընկերությունը հիմնված էր Աստծո հանդեպ իրենց հավատքի վրա:

***1 Կոր. 15:33 -** 33 Մի խաբուիք. չար ընկերակցութիւններն ապականում են բարի վարքերը:*

2. ԶՈՐՈՒԹՅՈՒՆ ԿԱ, ՄԻԱԲԱՆ ԱՂՈԹՔՆԵՐԻ ՄԵՋ:
THERE IS POWER IN CORPORATE WORSHIP

*1 Նաբուգոդոնոսոր թագավորը մի ոսկի արձան շինեց՝ նորա բարձրությունը վաթսուն կանգուն,
լայնությունը վեց կանգուն. նորան կանգնեցրեց Դուրայի դաշտում Բաբիլոնի գավառում:*

- Նորա բարձրությունը 27, լայնությունը 3 մետր.

- Դուրայի նշանակում է բնակություն, որը բխում է արմատային բառից, որը նշանակում է կուտակել: Բաբելոնը նշանակում է խառնաշփոթ: Այսինքն մարմնավոր ցանկությունների բնակավայր որն էլ առաջացնում է շփոթություն:

*Հով. **4:23** - 23 Բայց ժամանակ կգա, և հիմա է, որ ճշմարիտ երկրպագողները հոգով և ճշմարտությունով կերկրպագեն Հօրը, որովհետև Հայրն էլ այսպէս է ուզում իր երկրպագողներին:*

- Երբ մենք ՄԻԱԲԱՆ բարձրացնում ենք մեր ձայները ի երկրպագություն Հիսուսին, մեր ամբողջ հեռանկարը փոխվում է: Ճշմարիտ երկրպագությունը հզոր ուժ է, որը զինաթափում է թշնամուն և նրա ամբողջ դիվային բանակը:

*Հայ. **5:11-14** - 11 Տեսայ նաև ու լսեցի ձայնը բազում հրեշտակների, որոնք կանգնած էին աթոռի և չորս կենդանիների ու քահանաների շուրջը. և նրանց թիւը բիւր բիւրաւոր և հազար հազարաւոր էր: 12 Որ մեծ ձայնով ասում էին. Արժանի է մորթված Գառն առնելու և զօրություն, և հարստություն, և իմաստություն, և կարողություն, և պատիվ, և փառք, և օրհնություն: 13 Եւ ամեն ստեղծված, որ երկնքում է, և երկրի վրա, և երկրի տակ, և ծովում. և նորանք ամենը որ նորա մէջ են, լսեցի որ ասում էին. Աթոռի վրա նստողին և Գառին լինի օրհնությունը, և փառքը, և կարողությունը հավիտյանս հավիտենից: 14 Եւ չորս կենդանիներն ասում էին, Ամէն. և քսանևչորս երէցներն ընկան և երկրպագություն արին նորան որ կենդանի է հավիտեանս հավիտենից:*

3. ԶՈՐՈՒԹՅՈՒՆ ԿԱ, ԵՐԲ ՄԻԱՍԻՆ ԵՆՔ ՔԱՅԼՈՒՄ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՎ:
THERE IS POWER IN TOGETHERNESS THROUGH HARDSHIP.

- Կա մի կրակ որ վառվում է բայց չի սպառնում: Մովսեսը և կրակով բռնկված մորենին: Այս կրակը քեզ դարձնում է հեզ և խիզախ:

23 Եւ այս երեք մարդիկ՝ Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը՝ ընկան կրակով բորբոքված հնոցի մէջը կապուած: 25 Նա էլ պատասխանեց և ասեց. Ահա ես չորս մարդ եմ տեսնում՝ արձակված ման են գալիս կրակի մէջ.

*Ես. **43:2** - 2 Երբոր ջրերից անցնես, ես քեզ հետ եմ, և եթէ գետերով՝ նորանք քեզ չեն ողողի. երբոր գնաս կրակի միջով, չես այրվի, և բոցը քեզ պիտի չվառի:*

*Գործ. **4:32-33** - 32 Եւ հավատացեալների բազմության սիրտը և հոգին մէկ էր. Եւ ոչ ոք չէր ասում իր ստացուածքի մէկի համար՝ թէ իրանն է. Այլ նրանց համար ամեն բաները հասարակաց էին: 33 Եւ առաքեալները մեծ զօրությունով վկայություն էին տալիս Տէր Հիսուսի հարության համար. և մեծ շնորհք կար նորանց ամենի վրա:*

ԱՄՓՈՓՈՒՄ

- Մենք բոլոր տարբերվում ենք մեկս միյուսից և ունենք տարբեր հասկացողություն անգամ Աստծո խոսքի վարդապետության մեջ: Չպետք է թույլ տանք որ դա մեզ իրարից բաժանի: Մեր եկեղեցում ունենք այլ ազգի մարդիկ.